# Լրատու Newsletter

ԳԷՈՐԳ ԹԱՀԹԱԵԱՆ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆ

K TAHTA ARMENIAN COMMUNITY SUNDAY SCHOOL



Email: info@armenianschool.org.uk
armenianschool@hotmail.co.uk

Website: www.armenianschool.org.uk



Յունուար 2014
Լրատու թիւ 3


ԱՆԻ

ՎԱՆ

ԿԱՐՍ



## Ողջոյնի Խօսք

Սիրելի աշակերտներ և ուսուցիչներ, յարգելի ծնողներ և հոգաբարձուներ շնորհաւորում եմ բոլորիդ նոր 2014-2015 ուսումնական տարուայ առթիւ:

Ես յոյսով եմ որ ամռային արձակուրդների ընթացքում բոլորդ լաւ հանգստացել էք և նոր աւիւնով և եռանդով պատրաստ էք սկսելու նոր ուսումնական տարին:

Ես բարի գալուստ եմ մաղթում նաև մեր նոր աշակերտներին և իրենց ծնողներին:

Մաղթում եմ բոլորիդ քաջառողջութիւն, նորանոր յաջողութիւններ ու ձեռքբերումներ: Սիրելի ուսուցչուհիներ ցանկանում եմ Ձեզ ուժ և եռանդ կատարելու Ձեր սուրբ առաքելութիւնը հայ մանուկներին հայեցի կրթութիւն և դաստիարակութիւն տալու համար:

Այս Լրատուն ներկայացնելու է 2014-2015 ուսումնական տարուայ Ա եռամսեակի ընթացքում Վարժարանում կատարուած աշխատանքները:

Շնորհակալութիւն այս Լրատուն կազմող յանձնախմբին Տիկնայք Արմինէ Սարգսեանին, Նաիրի Ստեփան-Սարգսեանին, Քրիստինէ Նանեանին և Լենա Գիւլխանճեանին:

Եթէ կունենաք որևէ հարց կամ առաջարկ այս շրջաբերականի բովանդակութեան վերաբերեալ, առանց վարանելու ուղարկէք էլեկտրոնային նամակ՝

E-mail: armenianschool@hotmail.co.uk

Օգտուելով առիթից շնորհաւորում բոլորիդ Նոր Տարուայ և Սուրբ Ծնունդի առթիւ: Ցանկանում եմ բոլորիդ քաջառողջութիւն և թող Նոր տարին բերի միայն ուրախութիւն և երջանկութիւն Ձեր բոլորի օջախներում:

Ռ Թաթուլեան
Տնօրինուհի

*Շնորհաւոր Նոր Տարի*
*և*
*Սուրբ Ծնունդ*

## Հայաստանի Հանրապետության Անկախության Հռչակման 23-րդ Տարեդարձ

Սեպտեմբերի 21-ին Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 23-րդ տարեդարձի առթիվ Վարժարանի աշակերտների հետ հանդիպեց Հայաստանի Հանրապետության վաստակաւոր երգչուհի Ալլա Լևոնեանը:

Ռ Թաթուլեանը աշակերտներին ներկայացրեց երգչուհու կենսագրությունն ու աշխատանքային գործունէությունը: Ալլա Լևոնեանը կատարեց երգեր աշակերտների մասնակցությամբ:

## Հանդիպում Նոր Աշակերտների Ծնողների Հետ



Հոկտեմբերի 5-ին Վարժարանի տնօրինուհին, հոգաբարձուները և ծնողական յանձնախմբի ատենապետուհին հանդիպեցին նոր աշակերտների ծնողների հետ և նրանց ներկայացրին Վարժարանի կառուցուածքը, կրթական համակարգը, ծնողական յանձնախմբի աշխատանքները և պատասխանեցին նրանց հետաքրքրող հարցերին:

---

## Մշակոյթի Օր

Հոկտեմբերի 19-ին տեղի ունեցաւ հանդէս նուիրուած «Մշակոյթի օրւան»:
Աշակերտները իրենց ուսուցչուհիների օգնութեամբ պատրաստել էին մի հրաշալի ծրագիր նուիրուած Մեսրոպ Մաշտոցին, հայ գրողներին, թարգմանիչներին և մեր նախահայրերին:
Հանդէսի սկզբում Տիկ Ռ Թաթուլեանը բարի գալուստ մաղթեց ներկաներին և փոխանցեց օրւայ խորհուրդը: Այնուհետև ելոյթ ունեցաւ երգչախումբը, որը ղեկավարում էր Լիդիա Ղազարեանը և Թերեզա Գևորգեանը, նուագակցում էր Թամար Մովսիսեանը:
Մանկապարտէզի երեխաները կատարեցին <<Քոչարի>> պարը, որը պատրաստել էր դաստիարակ տիկ Աննա Հենդէնը:
Արևմտահայերէն և արևելահայերէն դասարանների աշակերտները կատարեցին գեղեցիկ արտասանութիւններ՝ նուիրուած մեր հայոց լեզուին և մշակոյթին:
Հանդէսի վերջում աշակերտները շատ պատկերաւոր ներկայացրին մեր նախահայրերին՝ Հայկ Նահապետին, Տիգրան Մեծին, Գրիգոր Լուսաւորչին, Մեսրոպ Մաշտոցին, Սասունցի Դաւթին և Կոմիտասին, նրանցից իւրաքանչիւրը ներկայացրեց իր ժամանակաշրջանն և իր առաքելութիւնը:

Ծրագիրը պատրաստել էր Տիկ Ժենիա Ներսիսեանը:

*Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ*

## Մշակոյթի Օր...

Հայոց լեզուն աշխարհի ամենահին լեզուներից է: Մայրենի լեզուի բառերը մենք զցում ենք, ապրում, իսկ օտար լեզուինը՝ հասկանում, սովորում, յիշում,- այս տողերն գրել է Աւետիք Իսահակեանը:
Մ. Մաշտոցի ստեղծած կատարեալ այբուբենով է, որ մենք ուսանում ենք առ այսօր, ուսանելու ենք վաղը՝ երբեք չբաժանուելով նրանից և շարունակելու ենք կերտել մեր ինքնատիպ ու հարուստ մշակոյթը:

Ազգին պահողը, իրար միացնողը՝ լեզուն է: Ուրեմն եկէք պահենք, պահպանենք, սիրենք և սովորենք մեր Հայոց Լեզուն:

## Վարժարանի Ծնողական Ընդհանուր Ժողով

Նոյեմբերի 23-ին տեղի ունեցաւ վարժարանի ծնողական ընդհանուր ժողովը:
Վարժարանի խնամակալութեան ատենապետ, հոգաբարձուների խորհրդի քարտուղար Դկտ Գառնիկ Թարվերդին ծնողներին ներկայացրեց նախորդ ժողովի ատենագրութիւնը:
Վարժարանի տնօրինուհի Տիկ Ռուզաննա Թաթուլեանը ներկայացրեց վարժարանի կրթական վիճակը, ինչպէս նաև 2013-2014 ուսումնական տարուայ ընթացքում կատարուած աշխատանքները և 2014-2015 ուսումնական տարուայ ընթացքում նախատեսուած աշխատանքները:

Վարժարանի խնամակալութեան և հոգաբարձուների խորհրդի գանձապահ Պրն Պետրոս Ասլանեանը ներկայացրեց 2013-2014 ուսումնական տարուայ ֆինանսական վիճակը:
Ծնողական յանձնախմբի ատենապետ Տիկ Ֆլորա Թորոսեանը ներկայացրեց 2013-2014 ուսումնական տարուայ ընթացքում ծնողական յանձնախմբի կատարած աշխատանքները:
Վարժարանի հոգաբարձուների խորհրդի ատենապետ Տիկ Հերմինէ Չրչեանը, հոգաբարձուների խորհրդի անդամներ Տիկ Ռիթա Բարսեղեանը և Պրն Շահէ Ղուլեանը պատասխանեցին ծնողներին հետաքրքրող հարցերին:

Դպրոցէն ներս ունինք “Առաջարկներու Տուփ” մը եւ ձեզմէ կը խնդրենք որ ձեր առաջարկները, գաղափարներն ու տեսակէտները դպրոցի աշխատանքներու մասին՝ զետեղէք այդ տուփիկին մէջ:

## Ամանորի Հանդէս

Դեկտեմբերի 14-ին տեղի ունեցաւ Ամանորի հանդէսը:
Ինչպես ամեն տարի այս տարին էլ մեր երեխաները փորձեցին ճանապարհել շատ ուրախ ու զվարթ, որպեսզի ոգևորված սպասեն 2015 թվականի գալուստին: Շատ գեղեցիկ հանդես ցուցադրեցրին մեր երեխաները Ձմեռ պապիկի և Ձյունանուշի մասնակցությամբ: Նրանք երգեցին, պարեցին, արտասանեցին և գեղեցիկ ներկայացումներով հանդես եկան:
Բոլորը շատ ոգևորված էին, որովհետև սպասում էին Ձմեռ պապիկի նվերներին:
Իրենց մասնակցությունից զերծ չմնացին նաև մեր շատ սիրելի և հոգատար Ծնողական հանձնախումբը, նրանք իրենց պատրաստած ճաշատեսակները և թխվածքաբլիթները կրկին հրամցերեցին մեզ:

## 2014-2015 Տարեշրջան

| Առաջին Եռամսեակ 07 Սեպտ. 2014 – 14 Դեկտ. 2014 | |
|---|---|
| 7 Սեպտեմբեր | Վերամուտ |
| 19 Հոկտեմբեր | Մշակոյթի Օր |
| 26 Հոկտեմբեր | Արձակուրդ |
| 23 Նոյեմբեր | Ծնողական Ընդհանուր Ժողով |
| 14 Դեկտեմբեր | Նոր Տարուայ Հանդէս |
| **Երկրորդ Եռամսեակ 11 Յունուար 2015 – 22 Մարտ 2015** | |
| 7 Փետրուար | Ընդհանուր Գիտելիքներու Մրցում |
| 15 Փետրուար | Վարդանանց Տօն |
| 22 Փետրուար | Արձակուրդ |
| 15 Մարտ | Մայրերու Օր |
| 22 Մարտ | Զատկուայ Հանդէս |
| **Երրորդ Եռամսեակ 12 Ապրիլ 2015 – 5 Յուլիս 2015** | |
| 18 Ապրիլ | Ցեղասպանութեան 100 Ամեակ |
| 03 Մայիս | Գեղարուեստական Օր |
| 17 Մայիս | Մարզական Օր |
| 24 Մայիս | Արձակուրդ |
| 21 Յունիս | Դաշտահանդէս |
| 05 Յուլիս | Ամավերջի Հանդէս |

## Our News in Brief

- On September 21st 2014, in celebration of the 23rd anniversary of the Republic of Armenia's declaration of independence, the popular and acclaimed Armenian singer Alla Levonyan who is also UNICEF Armenia Goodwill Ambassador, visited the school and had a pleasant meeting with the pupils, staff and parents.
- On October 5th, the headteacher and governors met with the new families who joined the school welcoming them and discussing the school's structure.
- On October 19th, pupils of all ages participated in a special assembly dedicated to Mesrob Mashtots' creation of the Armenian Alphabet, the translators and our literary predecessors.
- On November 23rd, the school's Annual General Meeting took place in the presence of members of the school's board of trustees, governors, headteacher and parents.
- The children enjoyed an exciting and joyful Christmas celebration on the 4th December. Singing, dancing and performing for Santa Clause who in turn entertained them and rewarded them with presents. The ladies' committee provided a variety of tasty dishes and scrumptious cakes for the occasion.

*Խմբագիրներ՝ Տիկ Նաիրի Ստեփան-Սարգսեան, Տիկ Քրիստինէ Նանյան, Տիկ Արմինէ Սարգսեան*
*Խորհրդատու՝ Տիկ Ռուզաննա Թաթուլեան*
*Էջադրում՝ Տիկ Լենա Գիւլխանճեան*